

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ԳՐԱՆՅՎԱԾ Է

«ԿՐԹԱՍՆԵՐ»

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԴԻՐ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՍԱՄԲ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1
01.10 2001 թ.

«ԿՐԹԱՍՆԵՐ»

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ Գ. ՀԱԿՈՔՅԱՆ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ
30.10 2001թ.

ԳՐԱՆՅՍԱՆ N 211.181.00130
ՎԿԱՅԱԿԱՆ N 034052349

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ՊԵՏ ՌԵԳԻՍՏՐԻ ՂԵԿԱՎԱՐ

S. ՄՈՒԿՈՒՅԱՆ



ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ԿՐԹԱՍՆԵՐ»

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2001

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
«ԿՐԹԱՍԵՐ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

1.1 «Կրթասեր» հասարակական կազմակերպությունը (այսուհետև՝ կազմակերպություն) ընդհանուր նպատակներ և հետաքրքրություններ ունեցող, իր անդամների կամքի ազատ արտահայտությամբ ստեղծված ոչ կառավարական հասարակական կազմակերպություն է:

1.2 Կազմակերպությունն իր գործունեությունն իրականացնում է ժողովրդավարության, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության համընդհանուր դրույթների հիման վրա, առաջադրվում է արդարության, անկախության, մարդասիրության և իրավունքի գերակայության սկզբունքներով:

1.3 Կազմակերպությունը գործում է սույն կանոնադրությանը համապատասխան՝ ղեկավարվելով ՀՀ սահմանադրությամբ և օրենսդրությամբ:

1.4 Պետական գրանցման պահից կազմակերպությունը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ: Կազմակերպությունն ունի կնիք, անկյունադրոշմ, տիտղոսաթուղթ, հաշվարկային և այլ հաշիվներ բանկերում՝ ինչպես դրամով, այնպես էլ արտարժույթով:

1.5 Կազմակերպությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է հրատարակել թերթ, ամսագիր, հանդես:

1.6 Կազմակերպության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն (այսուհետև՝ ՀՀ), ք. Երևան, Հ/Ա զանգված, Բ-1 թաղ., Ա. Բաբաջանյանի պող., «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր, հեռ. 74-00-42:

1.7 Կազմակերպության գործունեության տարածքը ՀՀ-ն է: Կազմակերպությունը կարող է գործել նաև այլ երկրներում համապատասխան տվյալ երկրի օրենսդրությանը:

1.8 Կազմակերպության անվանումն է Կրթասեր» հասարակական կազմակերպությունը: Կազմակերպության կարճ անվանումն է՝ «Կրթասեր»:

2. Կազմակերպության նպատակներն ու խնդիրները

2.1 Կազմակերպության հիմնական նպատակներն են.

- նպաստել ՀՀ-ում կրթական բնագավառի զարգացմանը,
- աջակցել «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի (այսուհետև՝ կրթահամալիր) ուսուցիչների մշակած հեղինակային կրթական հայեցակետն ու կրթական ծրագրերը ներդնելու. դրանց համար անհրաժեշտ նյութական-ֆինանսական միջոցներ ստեղծելուն

- օժանդակել կրթահամալիրի ուսուցիչների ու սովորողների հանգստի կազմակերպմանն ու առողջության պահպանմանը, նպաստել կրթահամալիրի ուսուցիչների կենսամակարդակի բարձրացմանը:
- աջակցել կրթահամալիրի դպրոցներին մշակութային-լուսավորչական-մարզական և կրթական միջոցառումներ իրականացնելուն,
- նյութապես խրախուսել կրթահամալիրի հետազոտական-մեթոդական աշխատանք կատարող ուսուցիչներին ու ստեղծագործական որոնումներով և ծրագրերով սովորողներին,
- օգնել հանրապետության նորարար և ստեղծագործ ուսուցիչներին՝ իրականացնելու իրենց մանկավարժական առաջադեմ մտահղացումներն ու գաղափարները,
- հանրապետության դպրոցներում և հասարակության լայն շրջաններում պրոպագանդել մանկավարժության առաջադիմական հայեցակետերը և ուսուցման եղանակները, նպաստել դրանց ներդրմանը և իրականացմանը, դպրոցների միջև փորձի կենդանի փոխանակմանը,
- գործնական կապեր հաստատել կրթության բնագավառում գործող այլ կազմակերպությունների և բարեգործական միությունների հետ,
- պաշտպանել աշակերտների, ուսուցիչների և դպրոցների ազատություններն ու աշխատակիցների օրինական շահերն ու իրավունքները,
- հանդես գալ ուսումնական-կրթական գործի նորովի կազմակերպման առաջարկներով,
- նյութապես աջակցել կրթահամալիրի կարիքի մեջ գտնվող ուսուցիչներին ու սաներին,
- իր ներկայացուցիչների միջոցով օրենքով սահմանված կարգով, մասնակցել կրթահամալիրի, այդ թվում հանրապետության դպրոցների կառավարմանը:

3. Կազմակերպության գործունեությունը

3.1 Կազմակերպությունը իր նպատակներին հասնելու և խնդիրները լուծելու նպատակով մշակում և իրականացնում է համապատասխան ծրագրեր, կազմակերպում դասընթացներ, դասախոսություններ, սեմինարներ, ժողովներ, գործնական պարապունքներ, բանավեճեր, մրցույթներ, հանդիպումներ և այլ միջոցառումներ, օրենքով սահմանված կարգով տպագրում և տարածում է կրթական գրականություն:

3.2 Կազմակերպությունն իր խնդիրների լուծման նպատակով համագործակցում է ՀՀ պետական իշխանության մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, բարեգործական, հասարակական, հասարակական-քաղաքական, միջազգային, այլ երկրների կազմակերպությունների, ոչ կառավարական, և անհատ անձանց հետ:

3.3 ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպությունը կարող է ներկայացնել օրինագծեր, որոշումների նախագծեր և այլ առաջարկներ:

3.4 Կազմակերպությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է հիմնել մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, կենտրոններ, ակումբներ,

ծառայություններ ու գրասենյակներ, հանրապետությունում և օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենքների համապատասխան:

4. Կազմակերպության անդամությունը

4.1 Կազմակերպության անդամ գրավոր դիմումի համաձայն կարող է դառնալ չափահաս յուրաքանչյուր անձ՝ վարչության որոշմամբ՝ տվյալ անձի գրավոր դիմումի հիման վրա, ով ընդունում է կազմակերպության կանոնադրությունը, վճարում անդամավճար, մասնակցում կազմակերպության խնդիրների իրագործմանը:

4.2 Կազմակերպության անդամների համար սահմանվում է մուտքի վճար և ամենամսյա անդամավճար, որոնց չափերն ու տնօրինման ձևերը սահմանում է կազմակերպության վարչությունը:

4.3 Կազմակերպության անդամությունից ինքնակամ դուրս գալը կատարվում է անդամի գրավոր հայտարարությամբ, իսկ հեռացումը՝ կազմակերպության տարեկան ժողովի որոշմամբ՝ կազմակերպության կանոնադրության ոտնահարման դեպքում:

4.4 Կազմակերպության անդամն իրավունք ունի.

- մասնակցել կազմակերպության, ծրագրերի իրականացման աշխատանքներին, նրա անդամների ժողովներին, հավաքներին, հանդիպումներին և այլ միջոցառումներին,
- կազմակերպության, ղեկավար մարմինների քննարկմանը ներկայացնել կազմակերպության կառուցվածքին և գործունեությանը վերաբերող առաջարկներ, դիտողություններ և գործնական ծրագրեր, հանդես գալ նախաձեռնություններով և իրագործումներով,

- ընտրել կազմակերպության, ղեկավար մարմիններ և ընտրվել այդ մարմիններում, ընդգրկվել կազմակերպության կառուցվածքային օղակներում,

- ստանալ կազմակերպության գործունեությանը վերաբերող տվյալներ, տեղեկություններ:

4.5 Կազմակերպության անդամը պարտավոր է

- պահպանել կազմակերպության, կանոնադրական պահանջները, հարգել կազմակերպության, մասնաճյուղի մարմինների որոշումները,

- իր գործունեությամբ չարատավորել կազմակերպության, մասնաճյուղի անունը և հեղինակությունը,

- առանց կազմակերպության վարչության և մասնաճյուղի լիազորության հանդես չգալ վարչության, կազմակերպության անունից:

5. Կազմակերպության կառուցվածքը

5.1 Կազմակերպության Բարձրագույն մարմինը նրա անդամների ամենամսյա ժողովն է (այսուհետ՝ ժողով): Ժողովների միջև ընկած ժամանակահատվածում

կազմակերպության ղեկավար մարմինը կազմակերպության վարչությունն է (այսուհետ՝ վարչություն):

5.2 Ժողովը հրավիրում է վարչությունը: Ժողովը մեկ տարի ժամկետով ընտրում է կազմակերպության նախագահ, վարչություն և կազմակերպության վերահսկիչ կամ վերահսկիչ հանձնաժողով (այսուհետ՝ վերահսկիչ հանձնաժողով):

5.3 Ժողովը համարվում է իրավագոր, եթե ներկա են անդամների 50%-ից ավելի: Ժողովը կարող է, որոշում կայացնել ներկա անդամների կեսից ավելի կողմքվեարկելու դեպքում :

5.4 Արտահերթ ժողով կարող են հրավիրել նրա վարչությունը, ինչպես նաև կազմակերպության անդամների ընդամուր թվի 1/3-ը:

5.5 Կազմակերպության ժողովը .

- հաստատում է կազմակերպության կանոնադրությունը, նրանում կատարում է փոփոխություններ և լրացումներ , - ընտրում կազմակերպության նախագահ, վարչություն և կազմակերպության վերահսկիչ հանձնաժողով,
- քննարկում և հաստատում է կազմակերպության հեռանկարային ծրագիրը
- քննարկում է կազմակերպության վարչության և վերահսկիչ հանձնաժողովի հաշվետվությունները , հաստատում նրանց աշխատակարգերը,
- որոշում է կայացնում կազմակերպության լուծարման , վորակազմակերպման և անվանափոխության մասին,
- որոշում է վարչության անդամների թվակազմը
- հեռացնում է կազմակերպության անդամին կազմակերպության շարքերից:

5.6 Վարչությունը`

- նախապատրաստում, հրավիրում է կազմակերպության ժողովներ,

- կարող է ընտրել վարչության փոխնախագահ, ընտրում է վարչության քարտուղար,
- ժողովին ներկայացնում է կանոնադրական փոփոխությունների և լրացումների վերաբերյալ առաջարկություններ,
- հաստատում է կազմակերպության ծրագրերը և ապահովում դրանց կատարումը,
- հաստատում է գործադիր տնօրենության աշխատակարգը,
- ընդունում է որոշումներ, հաստատում պայմանագրեր և համաձայնություններ,
- նշանակում և ազատում կազմակերպության գործադիր տնօրենին,
- գործադիր տնօրենի ներկայությամբ հաստատում է գործադիր տնօրինության աշխատակազմի հաստիքները,
- պարբերաբար լսում է կազմակերպության գործադիր տնօրենի ընթացիկ հաշվետվությունները,
- ստեղծվում, վերակազմակերպում և լուծարում է միության կառուցվածքային միավորումներ, առանձնացվում ստորաբաժանումներ` (ներկայացուցչություններ, մասնաճյուղեր) գրասենյակներ , ինչպես նաև հաստատում նրանց կանոնադրությունը:

5.7 Վարչությունը որոշումներն ընդունում է նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Վարչության նիստն իրավադոր է, եթե նիստը մասնակցում են վարչության անդամների կեսից ավելին:

Վարչությանն իր հերթական նիստերը հրավիրում է առնվազն ամիսը մեկ անգամ:
Արտահերթ նիստ կարող է հրավիրել իր անդամների ընդհանուր թվի առնվազն 1/3-ի կամ վարչության պահանջով եռօրյա ժամկետում:

5.8 Վարչության անդամների կադմակերպության նախագահի առաջադրմամբ կարող են ընտրել փոխնախագահ և քարտուղար՝ մեկ տարի ժամկետով:

Կազմակերպության նախագահը միարժամանակ հանդիսանում է վարչության նախագահը:

5.9 Կազմակերպության (վարչության) նախագահը հանդես է գալիս կազմակերպության (վարչության) անունից, ներկայացնում կազմակերպությունը (վարչությունը)՝ այլ կազմակերպությունների և անձանց հետ հարաբերություններում, ղեկավարում է վարչության ընթացիկ աշխատանքները,

- համակարգում է կազմակերպության վարչության ընթացիկ աշխատանքները,

- վարում է վարչության նիստերը,

- հրավիրում վարչության արտահերթ նիստեր:

Նախագահի բացակայության, կամ հրաժականի դեպքում, մինչև ժողովը նրան փոխաչինում է փոխնախագահը կամ քարտուղարը: Վարչության քարտուղարը պետք է գումարի վարչության նիստեր, կազմի արձանագրությունները: Եթե վարչության քարտուղարը փոխարինուն է կազմակերպության նախագահին, վարչությանն իր անդամներից ժամանակավոր ընտրում է քարտուղար:

5.10 Կազմակերպության գործադիր տնօրինության աշխատանքները ղեկավարում է գործադիր տնօրենը, ում մեկ տարի ժամկետով նշանակում է վարչությունը:

5.10.1 Կազմակերպության գործադիր տնօրինությունը բաղկացած է գործադիր տնօրենից և նրա աշխատակազմից:

5.10.2 Կազմակերպության գործադիր տնօրենը պատասխանատու է գործադիր տնօրինության աշխատակազմի ընտրության և արդյունավետ աշխատանքի համար:

5.10.3 Կազմակերպության գործադիր տնօրինությունը՝

- ապահովում է վարչության հաստատած ծրագրերի կատարումը,

- կնքում պայմանագրեր,

- կազմակերպությունը ներկայացնում վարչական, դատական,

ֆինանսական մարմիններում,

- իրականացնում է ֆինանսատնտեսական գործունեություն:

5.10.4 Կազմակերպության գործադիր տնօրենը վաղարժամ կարող է աշխատանքից ազատ արձակել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ վարչության որոշմամբ:

5.11 Ամենամյա ժողովը կազմակերպության վերահսկիչը հանձնաժողով ընտրում է 1 տարի ժամկետով:

Վերահսկիչ հանձնաժողովը (վերահսկիչը)՝

- իրականացնում է վարչություն, գործադիր տնօրինության,

կազմակերպության կառուցվածքային բոլոր մարմինների

ֆինանսատնտեսական գործունեության ընդհանուր վերահսկողությունը.

- իրականացնում է կազմակերպության գործունեության կանոնադրական վերահսկողությունը.

- ներկայացնում է տարեկան ամփոփիչ հաշվետվություն կազմակերպության ժողովին:

Վերահսկիչ հանձնաժողովի նիստերը օրինական են, եթե նրան մասնակցում են անդամների 2/3-ը:

Բոլոր որոշումները ընդունվում են վերահսկիչ հանձնաժողովի անդամների ձայների 50%-ով:

Վերահսկիչ հանձնաժողովն իր նախագահին ընդունում է 1 տարի ժամկետով:

Վերահսկիչ հանձնաժողովի փոխարեն կարող է ընտրել վերահսկիչ: Վերահսկիչը որոշումներ է ընդունում միանձնյա:

6. Կազմակերպության գույքը և դրամական միջոցները

6.1 Կազմակերպությանը սեփականության իրավունքով կարող են պատկանել շինություններ, նյութական, դրամական և փոխադրական միջոցներ, ինչպես նաև օրենքով չարգելված այլ գույք և արժեքներ:

6.2 Կազմակերպության նյութական և դրամական միջոցները գոյանում են կազմակերպության մուտքի վճարներից, անդամավճարներից, անձանց նվիրատվություններից, դրամաշնորհներից, ՀՀ օրենսդրությամբ չարգելված գործունեությունից:

6.3 Կազմակերպության գույքն ու դրամական միջոցներն օգտագործում են բացառապես կազմակերպության ծրագրային և կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար: Տարեկան ընդհանուր ծախսերում կազմակերպչական ծախսերի մասնաբաժնի առավելագույն չափը նախատեսվում է 80%:

7. Կազմակերպության գործունեության լուծման կարգը

7.1 Կազմակերպության գործունեությունը կարող է լուծարվել կազմակերպության ժողովի որոշմամբ կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.2 Կազմակերպության լուծարման դեպքում ստեղծվում է լուծարքային հանձնաժողով, որը կազմում է կազմակերպության գույքի, նյութական և դրամական միջոցների վերջնահաշվարկը:

7.3 Կազմակերպության պարտքերի մարումից հետո մնացած գույքը, նյութական միջոցները օգտագործվում են կազմակերպության կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար, իսկ եթե անհնար է փոխանցվում է պետական բյուջե:



[Handwritten signature]

*215 Spruce Street & 5th
Philadelphia*

